

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 18.08.2023թ.

Ամփոփագրում նշված պայմանները

կարող են փոփոխված լինել

Հեռ. (+374 10) 510 510,

www.inecobank.am**Ապառիկ առևտրի վարկավորման ծառայություն**

Վարկի նպատակ	Ծառայությունների և/կամ սպառողական ապրանքների ձեռքբերում
Վարկառուի նկարագիր	21-70 տարեկան ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ
Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի գումար	30,000-5,000,000 ՀՀ դրամ

Վարկի ժամկետ	3 - 72 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք¹	0–21,7%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	0-23,99%
Վարկի ամսական սպասարկման վճար¹	Վարկի սկզբնական գումարի 0-1.5%-ի չափով
Վարկի վաղաժամկետ մարում	Վարկը ցանկացած ժամանակ կարող է վաղաժամկետ մարվել, որի դեպքում տույժեր և այլ վճարներ չեն գանձվում
Ժամկետանց պարտավորությունների մարում	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ՝ չմարված գումարի 0.13 ² %-ի չափով
Կանխավճար	0-70%
Ապահովվածություն	Ձեռք բերվող ապրանք

¹ Տարեկան անվանական տոկոսադրույքի և վարկի ամսական սպասարկման վճարի չափը որոշվում են համաձայն Բանկի և համապատասխան ընկերության համագործակցության պայմանների և հաճախորդի վարկարժանության գնահատականի:

² Նշված տոկոսադրույքը ենթակա է փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխման դեպքում:

Վարկ/գրավի արժեք հարաբերության առավելագույն ցուցանիշ	100%
Ապահովագրություն	Չի պահանջվում
Տրամադրման եղանակ	Անկանխիկ
Մարման եղանակ	<ul style="list-style-type: none"> • Անուիտետային (մայր գումարի, տոկոսագումարների և հաշվի սպասարկման վճարի ամսական հավասարաչափ վճարումներ) • Անհատական մարման գրաֆիկ, որը ներառում է մայր գումարը, տոկոսագումարները և հաշվի սպասարկման վճարները

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դիմելու պահին նախորդող առնվազն 3 ամիս անընդմեջ Բանկում ոչ պակաս քան 100,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթի չափով ավանդ ունեցող հաճախորդների համար սույն սակագների շրջանակներում սահմանվում է՝

- անվանական տոկոսադրույքի գեղջ 2 տոկոսային կետի չափով, (բայց ոչ պակաս, քան 13,5%-ը),
- հաշվի սպասարկման ամսական վճարի գեղջ՝ 50%-ի չափով:

Ճանաչություն

1. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽԿԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:
2. Հաշվին մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկի պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ միջնորդավճարների, տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի սույն կետով սահմանված մարումն իրականացնել այլ հաջորդականությամբ:
3. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱԾՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Ե ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱԾՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Ե ԻՆԵԿՈԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (www.inecobank.am) «ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱԾՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ԷԶՈՒՄ:
4. Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ՝ ելնելով 365 օրվա հաշվարկից:
5. **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ**՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԿԱ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ԶԵՎԱՎՈՐՎՈՒՄ Ե ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ:
6. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Ե ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱԾՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Ե ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱԾՎԻՆ:
7. Վարկի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել.
 - անձը հաստատող փաստաթուղթ,

- հանրային ծառայությունների համարանիշ (ՅԾՅ),
 - եկամուտները հիմնավորող փաստաթուղթ, այդ թվում աշխատավայրից տեղեկանք (ըստ պահանջի),
- 8.** Վարկի տրամադրման դրական որոշման գործոններն են՝
- կայուն եկամտի աղբյուր և/կամ համապատասխան նպատակային խնայողական պլանին նվազագույն անհրաժեշտ մուտքերի ապահովում,
 - դրական կամ չեզոք վարկային պատմություն,
 - արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր,
- 9.** Վարկը մերժելու գործոններն են՝
- վարկը մարելու համար անբավարար եկամուտներ և/կամ համապատասխան նպատակային խնայողական պլանին նվազագույն անհրաժեշտ մուտքերի բացակայություն,
 - հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում,
 - բացասական վարկային պատմություն,
 - հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ:
- 10.** Վարկի տրամադրման ժամկետ՝ վարկի տրամադրման դրական որոշման կայացումից հետո մինչև 5-15 րոպե:
- 11.** ՎԱՐԿԵՐԸ ՁԵՎԱԿԵՐՊՎՈՒՄ ԵՆ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՃԱՌՔԻ/ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏՈՒՄ և ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՐԵՐՈՒՄ:
- 12.** Բանկը սպասարկում է միայն այն ապառիկ վաճառքները, որոնք կատարվել են Բանկի հետ համագործակցության պայմանագիր կնքած ընկերությունների կողմից: Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների ցանկին կարող եք ծանոթանալ Ինեկոբանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:
- 13.** ԲԱՆԿԸ ՆԱԽՔԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐԿԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/05-Ի, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՉ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
- 14.** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից «ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ (Նման պահանջի առկայության դեպքում):
- 15.** Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

16. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

17. Վարկի ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ հնեկորանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am և Բանկի մասնաճյուղերում:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱԿԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

Ճառայություն	Սակագին
Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում	Անվճար
Հաշվի քաղվածքի տրամադրում փոստով (ամսական)	<ul style="list-style-type: none"> ՀՀ տարածքում՝ անվճար ՀՀ տարածքից դուրս՝ 2,000 ՀՀ դրամ + փոստային առաքման ծախսերը
Հաշվի քաղվածքի տրամադրում ԷԼ. փոստով	Անվճար
Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում	<ul style="list-style-type: none"> մինչև 1 տարվա վաղեմության- 1,000 ՀՀ դրամ 1 տարուց ավել վաղեմության-3,000 ՀՀ դրամ

Քաղվածքի տրամադրման ժամկետ	<ul style="list-style-type: none"> Չաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում Չաճախորդին տրամադրել իր Չաշվի վերաբերյալ Չաշվի քաղվածք՝ գանձելով Չաշվի քաղվածքի տրամադրման համար Սակագներով սահմանված վճարները:
Տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում (մինչև 3 տարի վաղեմության)	<p>Բանկային հաշվի վերաբերյալ և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում - 3,000 ՀՀ դրամ</p> <p>Գործարքների մանրամասների (այդ թվում արագ դրամական փոխանցումների համակարգերով) վերաբերյալ³- 3,000 ՀՀ դրամ</p> <p>Վարկերի և դրանց ապահովությունների վերաբերյալ⁴ - 5,000 ՀՀ դրամ⁵</p> <p>Եկամտային հարկի փոխհատուցում ստանալու նպատակով հիփոթեքային վարկի և հիփոթեքային վարկի ծրագրային համապատասխանության վերաբերյալ տեղեկանք – անվճար</p> <p>Այլ տիպի և/կամ վաղեմության տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում- 10,000 ՀՀ դրամ</p>
Տեղեկանքի տրամադրման ժամկետ	<p>Առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում</p>

Ձեր ֆինանսական տեղեկատուն

³ 10 գործարքից ավել տեղեկատվության համար կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

⁴ 2 և ավելի պայմանագրերի գծով տեղեկատվություն ներառելու դեպքում, կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

⁵ Համաձայնությունների սակագները կարգավորվում են համաձայն վարկավորման սակագների:

«Ձեր ֆինանսական ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»՝ www.fininfo.am, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԾՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով

1. Բանկն առաջարկում է ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄոբայլ և այլ Համակարգեր՝ ինտերնետով, հեռախոսագանգի կամ SMS հաղորդագրության և կապի այլ միջոցներով բանկային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև տեղեկություններ ստանալու հնարավորություն՝ առանց Բանկ այցելելու: Համակարգերը ժամանակակից և հարմարավետ գործիքներ են, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել Հաշիվներով կատարվող գործառնությունները, ներկայացնել վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ, ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել տվյալ Համակարգում Բանկի կողմից մատչելի դարձված ֆինանսական և այլ գործառնություններ: Համակարգերի տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Կայքում կամ համապատասխան Համակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:
2. Համակարգերը հասանելի են Բանկում համապատասխան հաշիվներ ունեցող Հաճախորդների համար: Հաճախորդին համապատասխան Համակարգից օգտվելու սարքի, օգտագործողի անվան, գաղտնաբառի, ինչպես նաև Հաճախորդին համակարգից օգտվելու հնարավորություն այլ կերպ ընձեռելը նշանակում է, որ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Համակարգի տրամադրման պայմանագիր՝ Հիմնական պայմաններին համապատասխան: Համակարգի տրամադրման պայմանագրի անբաժանելի մասն են Հիմնական պայմանները, Սակագները, համապատասխան Համակարգի օգտագործման ուղեցույցները, Բանկի ինտերնետային կայքերի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:
3. Կողմերն ընդունում են, որ Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է Հաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Համակարգերի միջոցով Հաճախորդին բանկային ծառայություններ մատուցելու համար:

4. Կողմերն ընդունում են, որ Հաճախորդին նույնականացնելուց հետո Համակարգ մուտք գործելու համար Հաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Հաճախորդի կողմից Համակարգ մուտք գործելուց հետո Համակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Հաճախորդի կողմից: ԻնեկոՕնլայն Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:
5. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Համակարգ մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել Համակարգերն օգտագործելիս այլ անձանց կողմից Համակարգ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար:
6. ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄորբայլ և այլ Համակարգերից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թրքեններ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել Հաճախորդին տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:
7. Բանկն օգտագործում է Համակարգերով տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ: Այդուհանդերձ, Հաճախորդը Համակարգերն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգերի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգերի օգտագործումից բխող Հաճախորդների տվյալների բացահայտման և Հաճախորդների ցանկացած այլ կորուստների և վնասների համար:
8. Համակարգերը տրամադրվում են դրանց հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն են տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Հաճախորդը տեղյակ է, որ կախված Վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, Քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Հաճախորդներին առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված Հաճախորդի համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել Համակարգերով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել

կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը, (ներառյալ՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:

9. Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:
10. Բանկն իրավունք ունի Համակարգի միջոցով կատարվող գործառնությունների համար նախատեսել սահմանաչափեր, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականներն ու ցուցումները կատարելիս իրականացնել Հաճախորդի ինքնության հավելյալ ստուգում՝ պահանջելով լրացուցիչ ձայնային կամ այլ հաստատում: Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Համակարգ մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ Սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված վճարները չկատարելու, սույն Հիմնական պայմանների պահանջները խախտելու, ինչպես նաև Հաճախորդի նույնականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքերում:
11. Համակարգի տրամադրման պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:
12. «Ինելկորանկ» ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

Վարկային պատմության և վարկային սքորի եռությունն ու բարելավման ուղղությունները

Վարկային պատմություն

Վարկային պատմությունը հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է: Վարկային պատմությունը կարող է ազդել վարկի գծով որոշումների կայացման վրա և ներառում է առնվազն 5 տարվա վաղեմությամբ տեղեկատվություն:

Վարկային պատմությունը ներառում է՝

- հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների չափի, տարեկան տոկոսադրույքի, պարտավորությունների մնացորդի, դրանց դիմաց գրավադրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների գծով վճարների պատմությունը, ներառյալ սահմանված ժամանակացույցից վճարումների ուշացումները
- Այլ անձանց տրված երաշխավորությունները
- Հաճախորդին փոխկապակցված անձանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը

Հաճախորդը իրավասու է տեղեկանալ իր վարկային պատմությանը՝ իրականացնելով <https://www.abcfinance.am> կամ www.acra.am կայքերում նշված գործընթացը:

Վարկային պատմության մեջ սխալների ու թերությունների հայտնաբերման դեպքում պարզաբանման և ուղղման նպատակով հաճախորդները կարող են այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվությունը վարկային բյուրո փոխանցած ֆինանսական կազմակերպությանը:

Վարկային սքոր

Վարկային սքորը հաճախորդի սպասարկած պարտավորությունների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված գնահատական է, որը ցույց է տալիս տվյալ հաճախորդի կողմից վարկի վերադարձելիության ռիսկն առաջիկա որոշակի ժամանակահատվածում:

Բանկը մանրաձախ վարկավորման ոլորտում հաճախորդների վարկարժանության գնահատման համար օգտագործում է սեփական սքորինգային համակարգը:

Սքորի հաշվարկման հիմքում ընկած են հետևյալ գործոնների խմբերը`

- Հաճախորդի վարկային պատմությունը (վճարումների ուշացումները նվազեցնում են սքորը)
- Հաճախորդի զբաղվածության և եկամտի վերաբերյալ տեղեկատվությունը (բացակայությունը նվազեցնում է սքորը)
- Հաճախորդի սոցիալական և վարքագծային այլ գործոնները (ունեն սքորի վրա ինչպես դրական այնպես էլ բացասական ազդեցություն, կախված գործոնի տեսակից և արտահայտման ձևից)

Վարկային պատմության և սքորի բարելավման ուղղություններ

Հաճախորդները իրենց վարկային պատմության և սքորի բարելավման համար պետք է`

- իրականացնեն իրենց ստանձնած պարտավորությունների գծով վճարումները ժամանակացույցին համաձայն
- խուսափեն վարկային ծանրաբեռնվածությունից և չհիմնավորված նոր վարկային հայտերից
- խուսափեն անվստահելի երրորդ անձանց երաշխավորությունների տրամադրումից: